«ՔԱՋԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/10

ք. Քաջարան « 29» մայիսի 2018 թ.

'Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ը ի դեմս տնօրենի պաշտոնակատար Հրաչյա Թադևոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից և «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա. Դավթյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 79 678,02 (յոթանասունինը հազար վեց հարյուր յոթանասունութ ամբողջ երկու հարյուրերորդական) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Սույն պայմանագրի մասով Վաճառողը Ապրանքի մատակարարումը իրականացնում է 2018թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

3. 3 Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետը՝ մինչև ֆինանսական միջոցները նախատեսվելը, սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Նույն կետի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ***Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, սակայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն այս պայմանագրի շրջանակներում գնումը կիրականցվի անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության դեպքում և կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:***

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջական խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ	«Ռիխտեր-Լամբրոն »ՀՁ ՍՊԸ
Հասցե՝ ք.Քաջարան, Բակունցի 1	Հասցե՝ ք. Երևան, Ղ. Փարպեցու 22/14
Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ	Բանկ՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ»ՓԲԸ
Հ/Հ 1570025402170100	Հ/Հ 1660004154880100
ՀՎՀՀ 09417527	ՀՎՀՀ 02542882
Տնօրենի պաշտոնակատար Հ.Թադևոսյան	Գլխավոր տնօրեն՝ Ա. Դավթյան
_____	_____
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված
«29» մայիս 2018 թ. կնքված
«ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/10» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
7	33621490/503	մեթիլդոպա (մեթիլդոպա սեսկվիհիդրատ) 250մգ, դեղահատ՝ **Դոպեգիտ**	Egis, Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ, Հունգարիա	մեթիլդոպա (մեթիլդոպա սեսկվիհիդրատ) 250մգ, դեղահատ	դեղահատ	39,8	7960	200	ՀՀ,Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Բակունցի 1, «Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ	Համապատասխան պատվերի	Նախատեսվում է գնել 2018թ-ի ընթացքում, յուրաքանչյուր անգամ պատվիրատուից պատվեր ստանալուց 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ գնորդի կողմից պատվիրվածքանակին և տեսակին համապատասխան:
16	33631380/503	տոլպերիզոն (տոլպերիզոնի հիդրոքլորիդ), լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) 100մգ/մլ+2,5մգ/մլ; 1մլ,լուծույթ ներարկման՝ **Միդոկալմ ներարկման լ-թ**	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Հունգարիա	տոլպերիզոն (տոլպերիզոնի հիդրոքլորիդ), լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) 100մգ/մլ+2,5մգ/մլ ; 1մլ,լուծույթ ներարկման	սրվակ	460,84	9216,8	20			
17	33631380/504	տոլպերիզոն (տոլպերիզոնի հիդրոքլորիդ) դեղահատեր թաղանթապատ 150մգ՝ **Միդոկալմ**	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Հունգարիա	տոլպերիզոն (տոլպերիզոնի հիդրոքլորիդ) դեղահատեր թաղանթապատ 150մգ;	դեղահատ	74,8	11220	150			
26	33661149/503	Ացետազոլամիդ, դեղահատ 250մգ՝ **Դիակարբ**	Պոլֆարմա դեղագործական գործարան, Լեհաստան	Ացետազոլամիդ, դեղահատ 250մգ	դեղահատ	78,38	7838	100			
30	33691112/503	մետրոնիդազոլ, միկոնազոլ	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Հունգարիա	մետրոնիդազոլ, միկոնազոլ	հատ	132,41	3972,3	30			

		(միկոնազոլի նիտրատ) 100մգ+100մգ; դեղահատեր հեշտոցային՝ **Կլիոն-Դ 100**		(միկոնազոլի նիտրատ) 100մգ+100մգ; դեղահատեր հեշտոցային							
33	33691176/884	Պենտոքսիֆիլին 100 մգ՝ **Տրենտալ**	Սանոֆի Ինդիա ՍՊԸ, Հնդկաստան	Պենտոքսիֆիլին 100 մգ	դեղահատ	23,56	2827,2	120			
34	33691176/885	Երկաթի սուլֆատ, ասկորբինաթթու 320մգ+60մգ դեղահատեր թաղանթապատ՝ **Սորբիֆեր Դուրուլես**	Egis, Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ, Հունգարիա	Երկաթի սուլֆատ, ասկորբինաթթու 320մգ+60մգ դեղահատեր թաղանթապատ	դեղահատ	33,7	6740	200			
36	33691176/888	ֆենսպիրիդ (ֆենսպիրիդի հիդրոքլորիդ),2մգ/մլ; 150մլ պլաստիկե 22հկ, օշարակ՝ **Էրեսպալ օշարակ**	Լես Լաբորատոիրես Սերվիե Ինդուստրի, Ֆրանսիա	ֆենսպիրիդ (ֆենսպիրիդի հիդրոքլորիդ),2մգ /մլ; 150մլ պլաստիկե 22հկ, օշարակ	հատ	2501,24	7503,72	3			
38	33691176/890	մագնեզիումի լակտատի դիհիդրատ, պիրիդոքսինի հիդրոքլորիդ 470մգ+5մգ; դեղահատեր թաղանթապատ՝ **Մագնե B6**	Խինոին Դեղագործական և Քիմիական գործարան, Հունգարիա	մագնեզիումի լակտատի դիհիդրատ, պիրիդոքսինի հիդրոքլորիդ 470մգ+5մգ; դեղահատեր թաղանթապատ	դեղահատ	51,15	7672,5	150			
42	33691187/505	Վինպոցետին 5մգ;դեղահատեր՝ **Կավինտոն**	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Հունգարիա	Վինպոցետին 5մգ;դեղահատեր	դեղահատ	33,11	1655,5	50			
44	33691219/503	Մագնեզիում ասպարտատ (մագնեզիում ասպարտատի տետրահիդրատ), կալիումի	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Հունգարիա	Մագնեզիում ասպարտատ (մագնեզիում ասպարտատի տետրահիդրատ), կալիումի ասպարտատ	դեղահատ	26,02	2602	100			

		ասպարտատ (կալիում ասպարտատի հեմիհիդրատ) 140մգ+158մգ; դեղահատեր թաղանթապատ՝ **Պանանգին**		(կալիում ասպարտատի հեմիհիդրատ) 140մգ+158մգ; դեղահատեր թաղանթապատ						
45	33691219/504	Մագնեզիում ասպարտատ (մագնեզիում ասպարտատի տետրահիդրատ), կալիումի ասպարտատ (կալիում ասպարտատի հեմիհիդրատ) 316մգ+280մգ; դեղահատեր թաղանթապատ՝ **Պանանգին Ֆորտե**	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Հունգարիա	Մագնեզիում ասպարտատ (մագնեզիում ասպարտատի տետրահիդրատ), կալիումի ասպարտատ (կալիում ասպարտատի հեմիհիդրատ) 316մգ+280մգ; դեղահատեր թաղանթապատ	դեղահատ	47,12	9424	200			
46	33691222/504	Ցինարիզին 25մգ; դեղահատեր՝ **Ցինարիզին Սոֆարմա**	Սոֆարմա ԲԸ, Բուլղարիա	Ցինարիզին 25մգ; դեղահատեր	դեղահատ	5,23	1046	200		

***Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել:**

***Ծանոթություն**

ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,

բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,

գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

դ.Գնման առարկայի պահպանումը և տեղափոխումն իրականացվում է համաձայն վերջիններիս արտաքին փաթեթի կամ ներդիր-թերթիկի ցուցումների:

***Ծանոթություն** – Եթե գնման առարկաների հատկանիշները պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագրում կարդալ «կամ համարժեք» բառը: Համաձայն (Օրենքի Հոդված 13, Կետ 5)

*** Գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա :**

******Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ՀՀ, Սյունիքի մարզ, ք,Քաջարան, Բակունցի 1 «Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ , աշխատանքային օրերին և աշխատանքային ժամերին՝ 09:00-17:00:***

****Ապրանքների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Գնորդից պատվերը հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից պատվիրված քանակին և տեսակին համապատասխան:

*****Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա այունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ	«Ռիխտեր-Լամբրոն »ՀՁ ՍՊԸ
Հասցե՝ ք.Քաջարան, Բակունցի 1	Հասցե՝ ք. Երևան, Ղ. Փարպեցու 22/14
Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ	Բանկ՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ»ՓԲԸ
Հ/Հ 1570025402170100	Հ/Հ 1660004154880100
ՀՎՀՀ 09417527	ՀՎՀՀ 02542882
Տնօրենի պաշտոնակատար Հ.Թադևոսյան	Գլխավոր տնօրեն՝ Ա. Դավթյան
_____	_____
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավ
«29» մայիսի 2018 թ. կ
«ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/10» ծածկագրով պայմանագր

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
7	33621490/503	մեթիլդոպա (մեթիլդոպա սեսկվիհիդրատ) 250մգ, դեղահատ՝ **Դոպեգիտ**					30%	40%	50%	60%	70%	80%	100%	100%
16	33631380/503	տոլպերիզոն (տոլպերիզոնի հիդրոքլորիդ), լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) 100մգ/մլ+2,5մգ/մլ; 1մլ,լուծույթ ներարկման՝ **Միդոկալմ ներարկման լ-թ**					30%	40%	50%	60%	70%	80%	100%	100%
17	33631380/504	տոլպերիզոն (տոլպերիզոնի հիդրոքլորիդ) դեղահատեր թաղանթապատ 150մգ՝ **Միդոկալմ**					30%	40%	50%	60%	70%	80%	100%	100%
26	33661149/503	Ացետազոլամիդ, դեղահատ 250մգ՝ **Դիակարբ**					30%	40%	50%	60%	70%	80%	100%	100%
30	33691112/503	մետրոնիդազոլ, միկոնազոլ (միկոնազոլի նիտրատ) 100մգ+100մգ; դեղահատեր հեշտոցային՝ **Կլիոն-Դ 100**					30%	40%	50%	60%	70%	80%	100%	100%
33	33691176/884	Պենտօքսիֆիլին 100 մգ՝ **Տրենտալ**					30%	40%	50%	60%	70%	80%	100%	100%
34	33691176/885	Երկաթի սուլֆատ, ասկորբինաթթու 320մգ+60մգ դեղահատեր թաղանթապատ՝ **Սորբիֆեր Դուրուլես**					30%	40%	50%	60%	70%	80%	100%	100%
36	33691176/888	ֆենսպիրիդ (ֆենսպիրիդի հիդրոքլորիդ),2մգ/մլ; 150մլ պլաստիկե շշիկ, օշարակ՝ **Էրեսպալ օշարակ**					30%	40%	50%	60%	70%	80%	100%	100%
38	33691176/890	մագնեզիումի լակտատի դիհիդրատ, պիրիդոքսինի հիդրոքլորիդ 470մգ+5մգ; դեղահատեր թաղանթապատ՝ **Մագնե B6**					30%	40%	50%	60%	70%	80%	100%	100%
42	33691187/505	Վինպոցետին 5մգ;դեղահատեր՝ **Կավինտոն**					30%	40%	50%	60%	70%	80%	100%	100%
44	33691219/503	Մագնեզիում ասպարտատ (մագնեզիում ասպարտատի տետրահիդրատ), կալիումի ասպարտատ (կալիում ասպարտատի հեմիհիդրատ) 140մգ+158մգ; դեղահատեր թաղանթապատ՝ **Պանանգին**					30%	40%	50%	60%	70%	80%	100%	100%
45	33691219/504	Մագնեզիում ասպարտատ (մագնեզիում ասպարտատի տետրահիդրատ), կալիումի ասպարտատ (կալիում					30%	40%	50%	60%	70%	80%	100%	100%

		ասպարտատի հեմիհիդրատ) 316մգ+280մգ; դեղահատեր թաղանթապատ՝ **Պանանգին Ֆորտե**													
46	33691222/504	Ցինարիզին 25մգ; դեղահատեր՝ **Ցինարիզին Սոֆարմա**					30%	40%	50%	60%	70%	80%	100%	100%	

**** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:***

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ
«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ
Հասցե՝ ք.Քաջարան, Բակունցի 1
Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ
Հ/Հ 1570025402170100
ՀՎՀՀ 09417527
Տնօրենի պաշտոնակատար Հ.Թադևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Ռիխտեր-Լամբրոն »ՀՁ ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ղ. Փարպեցու 22/14
Բանկ՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ»ՓԲԸ
Հ/Հ 1660004154880100
ՀՎՀՀ 02542882
Գլխավոր տնօրեն՝ Ա. Դավթյան

/ստորագրություն/
Կ.Տ

Համաձայնագիր N 1

«Քաջարանի բժշկական կենտորն» ՓԲԸ-ի և «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի միջև 2018թ-ի մայիսի 29-ին կնքված ԴԵՂՈՐԱՅՔԻ ԳՆՄԱՆ N «ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/10 » պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին

ք. Քաջարան «29 » մայիսի 2018թ

«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Հ. Թադևոսյանի, որը գործում է «Կանոնադրության» հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից և «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա. Դավթյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից (երկուսը միասին կհիշատակվեն որպես Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կողմերի միջև 2018 թ-ի մայիսի 29-ին կնքված N « ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/10 » պայմանագրի 8.1; 8. 5 և 8"13 կետերը, ինչպես նաև հաշվի հառնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու հանգամանքը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1. 1. Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին հաստատել Պայմանագրի ապրանքների ձեռքբերման գնման և ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը (կցվում է):

2. Այլ պայմաններ

2. 1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:
2. 2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:
2. 3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածը հադիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ	«Ռիխտեր-Լամբրոն »ՀՁ ՍՊԸ
Հասցե՝ ք.Քաջարան, Բակունցի 1	Հասցե՝ ք. Երևան, Ղ. Փարպեցու 22/14
Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ	Բանկ՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ»ՓԲԸ
Հ/Հ 1570025402170100	Հ/Հ 1660004154880100
ՀՎՀՀ 09417527	ՀՎՀՀ 02542882
Տնօրենի պաշտոնակատար Հ.Թադևոսյան	Գլխավոր տնօրեն՝ Ա. Դավթյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված
«29» մայիսի 2018 թ. կնքված
N ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/10 *ծածկագրով գնման պայմանագրի N 1 Համաձայնագրի*

ԴԵՂՈՐԱՅՔԻ ԵՎ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախատեսվում է գնել 2018 թվականի ընթացքում	
Գնման ժամանակացույց Մատակարարման ժամկետը և վայրը	Յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացում: Ապրանքների տեղափոխումը, իրականացնում է մատակարարը, Հասցեն՝ ք. Քաջարան, Բակունցի 1, «Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
7	33621490/503	**Դոպեգիտ**					2388	3184	3980	4776	5572	6368	7960	7960
16	33631380/503	**Միդոկալմ ներարկման լ-թ**					2765	3687	4609	5530	6452	7374	9216,8	9216,8
17	33631380/504	**Միդոկալմ**					3366	4488	5610	6732	7854	8976	11220	11220
26	33661149/503	**Դիակարբ**					2351	3135	3919	4703	5487	6270	7838	7838
30	33691112/503	**Կլիոն-Դ 100**					1192	1589	1986	2383	2780	3178	3972,3	3972,3
33	33691176/884	**Տրենտալ**					848	1131	1414	1696	1979	2262	2827,2	2827,2
34	33691176/885	**Սորբիֆեր Դուրուլես**					2022	2696	3370	4044	4718	5392	6740	6740
36	33691176/888	**Էրեսպալ օշարակ**					2251	3002	3752	4502	5253	6003	7503,72	7503,72
38	33691176/890	**Մագնե B6**					2302	3069	3837	4604	5371	6138	7672,5	7672,5
42	33691187/505	**Կավինտոն**					497	662	828	993	1159	1324	1655,5	1655,5
44	33691219/503	**Պանանգին**					781	1041	1301	1561	1821	2082	2602	2602
45	33691219/504	**Պանանգին Ֆորտե**					2827	3770	4712	5654	6597	7539	9424	9424
46	33691222/504	**Ցինարիզին Սոֆարմա**					314	418	523	628	732	837	1046	1046

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով*

**Մատակարարման վայրը ք. Քաջարան, Բակունցի 1, «Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ , աշխատանքային օրերին և աշխատանքային ժամերին 9:00-17:00

ԳՆՈՐԴ
«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ
Հասցե՝ ք.Քաջարան, Բակունցի 1
Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ
Հ/Հ 1570025402170100
ՀՎՀՀ 09417527
Տնօրենի պաշտոնակատար Հ.Թադևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Ռիխտեր-Լամբրոն »ՀՁ ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ղ. Փարպեցու 22/14
Բանկ՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ»ՓԲԸ
Հ/Հ 1660004154880100
ՀՎՀՀ 02542882
Գլխավոր տնօրեն՝ Ա. Դավթյան

/ստորագրություն/
Կ.Տ